ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/16

ք. Երևան «17» 02 2022թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Հ. Սուքիասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գագարինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի կառուցման, ՀՀ Գեղարքունիքի մարզի «Վ. Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի, «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի, «ՀՀ Վայոց Ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Աշխատանքի ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում՝

- ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գագարինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար 450 օրացուցային օրը,

- ՀՀ Գեղարքունիքի մարզի «Վ. Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների համար 240 օրացուցային օրը,

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների համար 240 օրացուցային օրը,

«ՀՀ Վայոց Ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների համար 240 օրացուցային օրը:

Պայմանագրով նախատեսված աշխատանքի սկիզբ է համարվում շինարարական աշխատանքների կատարման, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը:

Աշխատանքի կատարման երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից պայմանագրի արդյունքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

1.3.1 Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների և ծավալների կատարման ժամկետները սահմանված են օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

1.3.2 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում.

1.3.2.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքմանը հաջորդող օրն ընկած ժամանակահատվածը,

1.3.2.2 շինարարական աշխատանքների կատարումն անհնարին դառնալու օրվանից մինչև դրանց վերսկսելու օրն ընկած ժամանակահատվածը, որն արձանագրվում է տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների առաջարկության հիման վրա՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված եզրակացությամբ:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված

սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2):

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին

չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքները:

4.6 Աշխատանքն ամբողջությամբ ընդունելիս գործում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն: Ընդ որում՝ վերջին վճարման կատարողականի գումարը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

6) չի կիրառվում պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետը:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 844 260 053 (ութ հարյուր քառասունչորս միլիոն երկու հարյուր վաթսուն հազար հիսուներեք) ՀՀ դրամ, որից 140 710 009 (մեկ հարյուր քառասուն միլիոն յոթ հարյուր տաս հազար ինը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն, ընդ որում՝

- ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գագարինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար՝ 245 000 017 (երկու հարյուր քառասունհինգ միլիոն տասնյոթ) ՀՀ դրամ, որից 40 833 336 (քառասուն միլիոն ութ հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսունվեց) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

- ՀՀ Գեղարքունիքի մարզի «Վ. Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների համար՝ 173 579 971 (մեկ հարյուր յոթանասուներեք միլիոն հինգ հարյուր յոթանասունինը հազար ինը հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ, որից՝ 28 929 995 (քսանութ միլիոն ինը հարյուր քսանինը հազար ինը հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

- «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների համար 215 700 027 (երկու հարյուր տասնհինգ միլիոն յոթ հարյուր հազար քսանյոթ) ՀՀ դրամ, որից 35 950 005 (երեսունհինգ միլիոն ինը հարյուր հիսուն հազար հինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

- «ՀՀ Վայոց Ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների համար՝ 209 980 038 (երկու հարյուր ինը միլիոն ինը հարյուր ութսուն հազար երեսունութ) ՀՀ դրամ, որից 34 996 673 (երեսունչորս միլիոն ինը հարյուր իննսունվեց հազար վեց հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով

նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի Պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5.4 Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով[1] (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4.1 Պայմանագրի գնից՝ մինչև 25%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում՝ հիմք ընդունելով աշխատանքների կատարման տվյալ տարվա համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվելիք աշխատանքների օրացուցային գրաֆիկով սահմանված ժամկետները:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Տույժի հաշվարկման հիմքում ընկած աշխատանքային օրերի մեջ չեն ներառվում կատարողական ակտում արտացոլված ժամանակահատվածի վերջին օրվանից մինչև կատարողական փաստաթղթերը Պատվիրատուին հանձնելու ամսաթիվն ընկած մինչև հինգ աշխատանքային օրը, որը տրվում է Կապալառուին՝ տվյալ փուլի աշխատանքներն ավարտելուց հետո կատարողական փաստաթղթերը կազմելու և աշխատանքները տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից հաստատվելու հետ կապված գործողությունները պատշաճ կերպով իրականացնելու համար:

6.7 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.8 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

---

[1] *Վճարման ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ընդհանուր ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ):

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝

ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ՝

«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ
գ/հ ք. Երևան, Փափազյան 8
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500257094970
ՀՎՀՀ 02648403
Տնօրեն՝

Հ. Սուքիասյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
«17» 02 2022թ. կնքված
ՈՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/16 գնման պայմանագրի

ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գագարինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի կառուցում

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
	1.Քանդման աշխատանքներ				
	1.1.Տարածքում առկա մարզադահլիճի քանդման աշխատանքներ				
1	մարզադահլիճի քանդում ը ապամոնտաժում տարածական ծավալով 36x13x6.5մ	մ³	3042.00	3,285.22	9,993,639.24
2	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տն	1406.93	3,285.22	4,622,058.15
	1.2.Տարածքի քանդման աշխատանքներ			-	-
3	Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում 586,95մ2	մ³	58.695	3,285.22	192,825.99
4	Խճի շերտի քանդում 586,95մ2	մ³	146.738	1,752.12	257,101.71
5	բետոնե աստիճանների քանդում	մ³	11.250	3,285.22	36,958.73
6	փայտե դռան և պատուհանների ապամոնտաժում	մ²	12.590	1,752.12	22,059.19
7	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տն	415.98	2,628.17	1,093,274.36
	Ընդամենը՝ քանդման աշխատանքներ				16,217,917.36
	2.Միջանցքի միացման հատված				
8	20 սմ հաստությամբ պ/բլոկե պատերի շարվածք , անցքերի բետոնացմամբ և ամրանավորումով 5.65մ2	մ³	1.130	58,696.98	66,327.59
9	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.023	720,372.05	16,280.41
10	մետալոպլաստե պատուհաններ / մոխրագույն / չբացվող մաս	մ²	2.050	48,024.80	98,450.84
11	մետալոպլատե դռներ / մոխրագույն/	մ²	6.346	58,696.98	372,491.04
	Ընդամենը՝ միջանցքի միացման հատված				553,549.87
	3.Հողային աշխատանքներ				
12	4-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով, բարձելով	մ³	1139.67	1,261.78	1,438,012.81
13	Բնահողի տեղափոխում 7կմ	տն	2165.37	1,009.43	2,185,792.47
14	4-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով կողլիցք	մ³	1025.48	1,261.78	1,293,927.00
15	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	53.973	1,261.78	68,101.42
16	Բնահողի հետ լիցք բուլդոզերով	մ³	1025.48	420.59	431,305.58
17	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	53.973	841.19	45,401.13
18	Բնահողի տոփանում տնևմոտոփանիչներով	մ³	1079.45	1,009.43	1,089,629.21
	Ընդամենը՝ հողային աշխատանքներ				6,552,169.62
	ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՄԱՍ				
	4.Կոնստրուկտիվ մաս				
19	Բուտաբետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-12,5 դասի բետոնից /միջանց/	մ³	22.800	59,122.06	1,347,982.97
20	Միածույլ ե/բ ժապավենային հիմքերի պատրաստում B-25 դասի բետոնից /միջանց/	մ³	18.400	69,555.36	1,279,818.62
21	Ամրանի արժեքը Φ16մմ A500c դասի	տն	0.864	452,109.86	390,442.08
22	Ամրանի արժեքը Φ8մմ Ac-1 դասի	տն	0.411	452,109.86	185,998.00
23	Բուտաբետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-7.5 դասի բետոնից	մ³	124.000	59,122.06	7,331,135.44
24	Միածույլ ե/բ ժապավենային հիմքերի պատրաստում B-25 դասի բետոնից	մ³	50.000	69,555.36	3,477,768.00
25	Ամրանի արժեքը Φ16մմ A500c դասի	տն	2.415	452,109.86	1,091,646.38
26	Ամրանի արժեքը Φ8մմ Ac-1 դասի	տն	1.690	452,109.86	763,884.82
27	Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում B-25 դասի բետոնից	մ³	3.600	69,555.36	250,399.30

28	Ամրանի արժեքը Փ16մմ A500c դասի	տն	0.235	452,109.86	106,381.45
29	Ամրանի արժեքը Փ8մմ Ac-1 դասի	տն	0.010	452,109.86	4,611.52
30	Միաձույլ ե/բ սալի պատրաստում B-20 դասի բետոնից /-0,05նիշ/	մ^3	52.130	69,555.36	3,625,920.92
31	Ամրանի արժեքը Փ10մմ A500c դասի	տն	3.739	452,109.86	1,690,257.92
32	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում B-25 դասի բետոնից	մ^3	33.600	69,555.36	2,337,060.10
33	Ամրանի արժեքը Փ20մմ A500c դասի	տն	0.520	452,109.86	235,097.13
34	Ամրանի արժեքը Փ22մմ A500c դասի	տն	3.452	452,109.86	1,560,633.50
35	Ամրանի արժեքը Փ8մմ Ac-1 դասի	տն	1.313	452,109.86	593,665.46
36	Միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում B-25 դասի բետոնից	մ^3	53.680	69,555.36	3,733,731.72
37	Ամրանի արժեքը Փ12մմ A500c դասի	տն	0.091	452,109.86	41,254.12
38	Ամրանի արժեքը Փ16մմ A500c դասի	տն	0.412	452,109.86	186,441.06
39	Ամրանի արժեքը Փ18մմ A500c դասի	տն	1.933	452,109.86	873,837.94
40	Ամրանի արժեքը Փ20մմ A500c դասի	տն	3.550	452,109.86	1,604,990.00
41	Ամրանի արժեքը Փ8մմ Ac-1 դասի	տն	2.253	452,109.86	1,018,603.51
42	ներդիր դետալ 8մմ	տն	0.834	799,886.67	667,105.48
43	Հեղույս M24	հատ	24.000	1,043.33	25,039.92
44	Միաձույլ ե/բ ծածկի սալի պատրաստում B-25 դասի բետոնից	մ^3	19.500	69,555.36	1,356,329.52
45	Ամրանի արժեքը Փ10մմ A500c դասի	տն	1.793	452,109.86	810,497.35
46	Ամրանի արժեքը Փ8մմ Ac-1 դասի	տն	0.091	452,109.86	41,142.00
47	Միաձույլ ե/բ ծածկի սալի պատրաստում B-25 դասի բետոնից	մ^3	5.730	69,555.36	398,552.21
48	Ամրանի արժեքը Փ10մմ A500c դասի	տն	0.563	452,109.86	254,537.85
49	Ամրանի արժեքը Փ8մմ Ac-1 դասի	տն	0.028	452,109.86	12,659.08
50	Միաձույլ ե/բ միջուկների պատրաստում B-20 դասի բետոնից	մ^3	4.220	69,555.36	293,523.62
51	Ամրանի արժեքը Փ12մմ A500c դասի	տն	0.379	452,109.86	171,304.43
52	Ամրանի արժեքը Փ8մմ Ac-1 դասի	տն	0.271	452,109.86	122,521.77
53	Միաձույլ ե/բ գոտինեի պատրաստում B-20 դասի բետոնից	մ^3	6.600	69,555.36	459,065.38
54	Ամրանի արժեքը Փ10մմ A500c դասի	տն	0.376	452,109.86	169,767.25
55	Ամրանի արժեքը Փ16մմ A500c դասի	տն	0.295	452,109.86	133,327.20
56	Ամրանի արժեքը Փ8մմ Ac-1 դասի	տն	0.228	452,109.86	102,936.37
57	Միաձույլ ե/բ բարավորի պատրաստում B-25 դասի բետոնից	մ^3	4.660	69,555.36	324,127.98
58	Ամրանի արժեքը Փ16մմ A500c դասի	տն	0.238	452,109.86	107,461.99
59	Ամրանի արժեքը Փ10մմ A500c դասի	տն	0.117	452,109.86	52,874.25
60	Ամրանի արժեքը Փ8մմ Ac-1 դասի	տն	0.449	452,109.86	202,997.33
	Ընդամենը՝ կոնստրուկտիվ մաս				39,437,332.93
	5. Տանիք				
	5.1.Դահլիճի մետաղական տանիք				
61	Մետաղական ֆերմաների տեղադրում մետաղական էլեմենտներից	տն	0.861	185,223.13	159,445.63
62	Մետաղական ֆերմայի արժեքը	տն	0.861	499,478.09	429,965.72
63	Մետաղական կավառամածի պատրաստում և տեղադրում	տն	4.220	185,223.13	781,682.36
64	N22 շվելլերի արժեքը	գմ	199.500	10,539.82	2,102,694.09
65	Մետաղական թերթ	տն	0.031	499,478.09	15,343.97
66	Ուղղաձիգ և հորիզոնական կապերի, պարագաների մոնտաժում մետաղական էլեմենտներից	տն	5.963	185,223.13	1,104,452.66
67	120x120x6մմ խողովակի արժեքը	գմ	197.71	11,654.49	2,304,209.22
68	100x100x6մմ խողովակի արժեքը	գմ	11.07	9,573.33	105,976.76
69	80x80x4մմ խողովակի արժեքը	գմ	13.54	6,243.48	84,536.72
70	պրոֆիլ	տն	0.778	634,753.41	494,047.62
71	Անկյունակ 140x90x10մմ	տն	0.306	624,347.62	190,975.45
72	100x100x4մմ խողովակի արժեքը	գմ	23.33	6,659.71	155,371.03
73	160x160x4մմ խողովակի արժեքը	գմ	6.99	10,405.79	72,736.47

74	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	5.963	24,973.90	148,914.93
	5.2.Հանդերձարանի հատվածի մետաղական տանիք			-	-
75	Մետաղական կարկասի պատրաստում մետաղական էլեմենտներից	տն	1.758	185,223.13	325,620.82
76	120x120x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	45.730	5,827.24	266,479.69
77	120x80x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	139.700	4,994.78	697,770.77
78	Մետաղական կավառամածի պատրաստում և տեղադրում	տն	0.965	185,223.13	178,770.70
79	40x30x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	431.300	1,248.70	538,564.31
80	Թիթեղ 12մմ	տն	0.040	499,478.09	19,729.38
81	35x35x5մմ մետաղական անկյունակի արժեքը	գմ	21.100	2,705.51	57,086.26
82	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	2.723	24,973.90	68,007.83
	5.3.Միջանցքի տանիք			-	-
82	Մետաղական կարկասի պատրաստում մետաղական էլեմենտներից	տն	0.290	185,223.13	53,689.59
83	100x100x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	32.150	4,994.78	160,582.18
84	Մետաղական կավառամածի պատրաստում և տեղադրում	տն	0.238	185,223.13	44,112.37
85	40x30x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	117.900	1,248.70	147,221.73
86	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0.528	24,973.90	13,186.78
	Ընդամենը՝ տանիք				10,721,175.04
	ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ				
	6. Հատակներ				
87	Ջերմամեկուսիչ խարամաբետոն 100 մմ B-12,5 դասի բետոնից	մ³	58.600	44,438.43	2,604,092.00
88	տոփանած խիճ 150 մմ	մ³	62.600	6,535.06	409,094.76
89	ջրամեկուսիչ շերտ / /իզոգամ/	մ²	586.030	1,411.57	827,222.37
90	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ²	586.000	2,614.03	1,531,821.58
91	45մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ²	591.111	2,875.43	1,699,698.62
	Ընդամենը՝ հատակներ				7,071,929.32
	7.Արտաքին պատեր				
92	15 սմ հաստությամբ պ/բլոկե պատերի շարվածք , անցքերի բետոնազմամբ և ամրանավորումով 29,34մ2	մ³	4.401	39,589.84	174,234.89
93	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.088	514,667.93	45,301.07
94	20 սմ հաստությամբ պ/բլոկե պատերի շարվածք , անցքերի բետոնազմամբ և ամրանավորումով 13,45մ2	մ³	2.690	39,589.84	106,496.67
95	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.054	514,667.93	27,689.13
96	30 սմ հաստությամբ պ/բլոկե պատերի շարվածք , անցքերի բետոնազմամբ և ամրանավորումով 522,56մ2	մ³	156.768	51,466.79	8,068,345.73
97	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	3.135	514,667.93	1,613,669.24
98	Միաձույլ ե/բ բարավորի պատրաստում B-25 դասի բետոնից /աստուհանագոգի ներքևի հատվածում /	մ³	2.960	79,179.68	234,371.85
99	Ամրանի արժեքը Φ14մմ A500c դասի	տն	0.202	514,667.93	104,199.67
100	Ամրանի արժեքը Φ8մմ Ac-1 դասի	տն	0.122	514,667.93	63,010.79
101	20 սմ հաստությամբ պ/բլոկե պատերի շարվածք , անցքերի բետոնազմամբ և ամրանավորումով 152,65մ2 /պարապետ/	մ³	30.530	39,589.84	1,208,677.82
102	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.611	514,667.93	314,256.24
103	30 սմ հաստությամբ պ/բլոկե պատերի շարվածք , անցքերի բետոնազմամբ և ամրանավորումով 81,56մ2	մ³	24.468	51,466.79	1,259,289.42
104	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.489	514,667.93	251,857.90
105	Պատերի ջերմոմեկուսացում 100 մմ հաստ.երկշերտ (վերին շերտը՝ 30 մմ, 205 կգ/խմ խտությամբ, ստորինը՝ 70 մմ հաստությամբ, 120 կգ/մխ խտությամբ) չայրվող բազալտե հանքաբամբակե սալերով 8282	մ³	82.800	79,179.68	6,556,077.50
106	ցոկոլային հատվածի ջերմամեկուսացում /պենոպլեքս 50 մմ / 101,68մ2	մ³	5.084	79,179.68	402,549.49
107	Պատերի ջրամեկուսացում 2 շերտ իզոգամից	մ²	815.430	2,137.85	1,743,267.03
108	ցոկոլային հատվածի բազալտե երեսպատում / բազալտ՝ 30մմ , ց/ա շաղախ՝ 30 մմ/, սալեռի խարսխումով	մ²	62.430	29,296.48	1,828,979.25

109	տրվերտինե երեսպատում / տրավերտին ՝ 30 մմ , ց/ա շաղախ ՝ 30 մմ, սալերի խարսխումով	մ²	155.430	29,296.48	4,553,551.89
110	Արտաքին պատերի բ/որակ ց/ավազե սվաղ	մ²	660.560	3,958.98	2,615,143.83
111	Պատերի ճակատային ներկում, մածկապատումով	մ²	660.560	2,771.29	1,830,603.32
	Ընդամենը՝ արտաքին պատեր				33,001,572.73
	8.Կոմպոզիտային պանելի /алюкобонд / դեկորատիվ հատված				
112	Մետաղական կարկասի պատրաստում մետաղական էլեմենտներից	տն	6.725	292,918.62	1,969,937.43
113	մետաղկան խողովակ 219x6 մմ / մոխրագույն փոշեներկված /	գմ	108.280	25,013.28	2,708,437.96
114	մետաղկան խողովակ 102x3 մմ / մոխրագույն փոշեներկված /	գմ	95.680	6,582.44	629,807.86
115	20x20x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	168.560	1,645.61	277,384.02
116	40x40x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	502.410	3,027.92	1,521,257.29
117	60x40x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	72.500	3,817.82	276,791.95
118	Մետաղական թերթ	տն	0.231	987,366.13	228,466.65
119	Ներդիր էլեմենտներ	տն	0.131	987,366.13	129,477.52
120	Մետաղական մասերի 2շերտ ներկում	մ²	213.475	2,632.98	562,074.39
121	կոմպոզիտային պանել /алюкобонд /	մ²	156.480	23,038.54	3,605,070.74
122	Ցինկապատ պրոֆիլ թիթեղից ծածկույթի պատրաստում գունավոր 0.5մմ հաստությամբ КП-21-0.5մմ	մ²	45.620	7,240.68	330,319.82
123	Ցինկապատ թիթեղներից ծածկույթի պատրաստում գունավոր 0.5մմ հաստությամբ	մ²	35.255	7,240.68	255,270.17
124	պոլիվինիլոխլորիդե կախովի առաստաղ / սպիտակ / 9 մմ հաստ. / /սպիտակ ներկված	մ²	25.520	3,291.22	83,991.93
	Ընդամենը՝ կոմպոզիտային պանելի /алюкобонд / դեկորատիվ հատված				12,578,287.73
	9.Տանիք				
125	Տանիքածածկույթի պատրաստում 100մմ հաստ սենդվիչ պանելներով	մ²	352.15	23,270.75	8,194,794.61
126	Ցինկապատ թիթեղներից ծածկույթի պատրաստում գունավոր 0.5մմ հաստությամբ	մ²	243.436	6,430.07	1,565,311.16
127	ջրհորդանի ջերմամեկուսացում / հանքային բամբակ /	մ³	12.860	30,619.40	393,765.48
128	ջրատար խողովակի ջերմամեկուսացում / հանքային բամբակ /	մ³	2.400	27,557.46	66,137.90
129	ջրատար խողովակ 150 մմ մոխրագույն ներկված	գմ	41.600	3,061.94	127,376.70
130	ջրատար խողովակ 100 մմ	գմ	4.500	3,061.94	13,778.73
131	խողովակ Մ 170 մմ / կույր տարածքի / отмостка / մեջ /	գմ	11.250	3,061.94	34,446.83
132	գիպսոտվարաթուղթ 12,5մմ հաստությամբ / ներքին հատվածում ջրհորդանի բողոքում /	մ²	1.500	5,511.49	8,267.24
133	ցինկապատ թիթեղյա դետալ L - 700 մմ /պիպ /конёк// ՏԹԴ -14 / 0.55 մմ հաստ. /	մ²	16.800	6,123.88	102,881.18
134	Պիպի արժեքը 700մմ	գմ	24.000	2,143.36	51,440.64
133	ցինկապատ թիթեղյա դետալ L - 250 մմ /պիպ /конёк// ՏԹԴ - 15 / 0.55 մմ հաստ. /	մ²	5.625	6,123.88	34,446.83
134	Պիպի արժեքը 250մմ	գմ	22.500	3,061.94	68,893.65
135	ցինկապատ թիթեղյա դետալ L - 370 մմ /պիպ /конёк// ՏԹԴ - 16 / 0.55 մմ հաստ. /	մ²	8.880	6,123.88	54,380.05
136	Պիպի արժեքը 370մմ	գմ	24.000	2,449.55	58,789.20
137	ջրհորդանի տաքացվող մալուխ	գմ	104.45	4,899.10	511,711.00
	9.1.Հանդերձարանի տանիք			-	-
138	Ցինկապատ պրոֆիլ թիթեղից ծածկույթի պատրաստում գունավոր 0.5մմ հաստությամբ КП-21-0.5մմ	մ²	161.250	6,736.27	1,086,223.54
139	ցինկապատ թիթեղյա դետալ L - 700 մմ /պիպ /конёк// ՏԹԴ -14 / 0.55 մմ հաստ. /	մ²	17.815	6,123.88	109,096.92
140	Պիպի արժեքը 700մմ	գմ	25.450	4,899.10	124,682.10
141	ցինկապատ թիթեղյա դետալ L - 250 մմ /պիպ /конёк// ՏԹԴ - 15 / 0.55 մմ հաստ. /	մ²	5.863	6,123.88	35,901.25

142	Պիպի արժեքը 250մմ	գմ	23.450	3,980.52	93,343.19
143	ջրատար խողովակ 150 մմ մոխրագույն ներկված	գմ	22.350	3,980.52	88,964.62
144	խողովակ Մ 170 մմ / կույր տարածքի / отмостка / մեջ /	գմ	6.550	3,980.52	26,072.41
145	Ցինկապատ թիթեղներից ծածկույթի պատրաստում գունավոր 0.5մմ հաստությամբ	մ²	88.593	6,123.88	542,529.84
146	ցինկապատ թիթեղյա դետալ L -460 մմ ՏԹԴ - 23 / ձնարգել / / 0.55 մմ հաստ. /	գմ	25.500	6,123.88	156,158.94
	9.2.Միջանցքի տանիք			-	-
147	Ցինկապատ պրոֆիլ թիթեղից ծածկույթի պատրաստում գունավոր 0.5մմ հաստությամբ ԿՊ-21-0.5մմ	մ²	45.650	6,736.27	307,510.73
148	ջրատար խողովակ 150 մմ մոխրագույն ներկված	գմ	17.800	4,899.10	87,203.98
149	խողովակ Մ 170 մմ / կույր տարածքի / отмостка / մեջ /	գմ	8.250	4,899.10	40,417.58
150	ցինկապատ թիթեղյա դետալ L -880 մմ ՏԹԴ - 24 / ձնարգել / / 0.55 մմ հաստ. /	գմ	34.000	4,899.10	166,569.40
151	ցինկապատ թիթեղյա դետալ L -460 մմ ՏԹԴ - 25 / ձնարգել / / 0.55 մմ հաստ. /	գմ	34.000	4,899.10	166,569.40
152	ցինկապատ թիթեղյա դետալ L -585-490 մմ ՏԹԴ - 26 / ձնարգել / / 0.55 մմ հաստ. /	գմ	34.000	4,899.10	166,569.40
	9.3.Տանիք բարձրացող աստիճաններ			-	-
153	տանիք բարձրացող աստիճանների պատրաստում և տեղադրում մետաղական խողովակներից	տն	0.325	272,512.70	88,438.00
154	89x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	41.850	5,205.30	217,841.81
155	40x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	21.300	3,980.52	84,785.08
156	Մետաղական մասերի 2շերտ ներկում	մ²	14.371	2,449.55	35,201.70
	Ընդամենը՝ տանիք				14,910,501.07
	10.Դռներ, պատուհաններ				
157	մուգ մոխրագույն Ալյումինե արտաքին դուռ , լայն պրոֆիլ 60 մմ, ջերմային կամրջակով , ջերմային ապակեպատումը / 4 + 4 մմ /	մ²	24.800	82,836.86	2,054,354.13
158	մուգ մոխրագույն Ալյումինե պատուհանո , լայն պրոֆիլ 60 մմ, ջերմային կամրջակով , ջերմային ապակեպատումը / 4 + 4 մմ / չբացվող	մ²	61.200	82,836.86	5,069,615.83
159	մետալոպլաստե պատուհաններ / մոխրագույն / բացվող մաս	մ²	2.160	31,063.82	67,097.85
160	մետալոպլաստե պատուհաններ / մոխրագույն / չբացվող մաս	մ²	68.257	31,063.82	2,120,323.16
161	Պատուհանագոգի ցինկապատ թիթեղ Լ - 340 մմ / 0.55մմ հաստ. 64,25գմ	մ²	21.845	4,487.00	98,018.52
162	Պատուհանագոգերի տեղադրում պլաստմասե նյութից	մ²	3.200	4,487.00	14,358.40
163	Պատուհանագոգի արժեքը B=17սմ	գմ	12.800	2,416.08	30,925.82
164	պատուհանագոգի մշակում ց/ա շղախով	մ³	1.650	34,515.36	56,950.34
	Ընդամենը՝ դռներ, պատուհաններ				9,511,644.06
	11.Ներքին հարդարում				
165	10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	մ²	17.840	43,831.45	781,953.07
166	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.036	547,893.08	19,548.83
167	20 սմ հաստությամբ պ/բլոկե պատերի շարվածք , անցքերի բետոնացմամբ և ամրանավորումով 159.45մ2	մ³	31.890	42,145.62	1,344,023.82
168	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.638	547,893.08	349,446.21
	11.1.Հ1 դպրոցը և մարզադահլիճը միմյանց կապող միջանցք			-	-
169	Պատերի բ/որակ գաջե սվաղ	մ²	41.500	3,371.65	139,923.48
170	Պատերի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ²	41.500	2,528.74	104,942.71
171	Առաստաղի բ/որակ գաջե սվաղ	մ²	42.200	3,371.65	142,283.63

172	Առաստաղի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	42.200	2,528.74	106,712.83
173	Պ/գրանիտե հատակների պատրաստում /12մմ/	մ^2	42.200	14,329.51	604,705.32
174	պրեսգրանիտե շրիշակ H - 100 մմ 11,3գմ	մ^2	1.130	14,329.51	16,192.35
	11.2.Հ2 միջանցք			-	-
175	Պատերի բ/որակ գաջե սվաղ	մ^2	84.710	3,371.65	285,612.47
176	Պատերի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	84.710	2,528.74	214,209.57
177	Առաստաղի բ/որակ գաջե սվաղ	մ^2	30.930	3,371.65	104,285.13
178	Առաստաղի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	30.930	2,528.74	78,213.93
179	Պ/գրանիտե հատակների պատրաստում /12մմ/	մ^2	30.930	14,329.51	443,211.74
180	պրեսգրանիտե շրիշակ H - 100 մմ 25,3գմ	մ^2	2.530	14,329.51	36,253.66
	11.3.Հ3 մարզչի սենյակ			-	-
181	Պատերի բ/որակ գաջե սվաղ	մ^2	33.110	3,371.65	111,635.33
182	Պատերի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	33.110	2,528.74	83,726.58
183	Առաստաղի բ/որակ գաջե սվաղ	մ^2	8.230	3,371.65	27,748.68
184	Առաստաղի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	8.230	2,528.74	20,811.53
185	Պ/գրանիտե հատակների պատրաստում /12մմ/	մ^2	8.230	14,329.51	117,931.87
186	պրեսգրանիտե շրիշակ H - 100 մմ 9,6գմ	մ^2	0.960	14,329.51	13,756.33
	11.4.Հ4 Օժանդակ սենյակ			-	-
187	Պատերի բ/որակ գաջե սվաղ	մ^2	27.500	3,371.65	92,720.38
188	Պատերի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	27.500	2,528.74	69,540.35
189	Առաստաղի բ/որակ գաջե սվաղ	մ^2	4.240	3,371.65	14,295.80
190	Առաստաղի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	4.240	2,528.74	10,721.86
191	Պ/գրանիտե հատակների պատրաստում /12մմ/	մ^2	4.240	14,329.51	60,757.12
192	պրեսգրանիտե շրիշակ H - 100 մմ 8,61գմ	մ^2	0.861	14,329.51	12,337.71
	11.5.Հ5 հաշմանդամություն ունեցող անձանց ս/հ			-	-
193	Ներքին պատերի բ/որակ ց/ավազե սվաղ	մ^2	35.450	3,371.65	119,524.99
194	Պատերի երեսպատում հախճասալով	մ^2	35.450	14,329.51	507,981.13
195	Պլաստմասե կախոցի առաստաղի պատրաստում ցինկապատ պրոֆիլներով	մ^2	7.500	9,272.04	69,540.30
196	Պ/գրանիտե հատակների պատրաստում /12մմ/	մ^2	7.500	14,329.51	107,471.33
	11.6.Հ6 Հանդերձարան			-	-
197	Պատերի բ/որակ գաջե սվաղ	մ^2	54.640	3,371.65	184,226.96
198	Պատերի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	54.640	2,528.74	138,170.35
199	Առաստաղի բ/որակ գաջե սվաղ	մ^2	22.030	3,371.65	74,277.45

200	Առաստաղի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	$մ^2$	22.030	2,528.74	55,708.14
201	Պ/գրանիտե հատակների պատրաստում /12մմ/	$մ^2$	22.030	14,329.51	315,679.11
202	պրեսգրանիտե շրիշակ H - 100 մմ 13,6գմ	$մ^2$	1.360	14,329.51	19,488.13
	11.7.Հ7 Մ/հ			-	-
203	Ներքին պատերի բ/որակ ց/ավազե սվաղ	$մ^2$	46.750	3,371.65	157,624.64
204	Պատերի երեսպատում հախճասալով	$մ^2$	46.750	14,329.51	669,904.59
205	Պլաստմասե կախոցի առաստաղի պատրաստում ցինկապատ պրոֆիլներով	$մ^2$	12.220	9,272.04	113,304.33
206	Պ/գրանիտե հատակների պատրաստում /12մմ/	$մ^2$	12.220	14,329.51	175,106.61
	11.8.Հ8 Հանդերձարան			-	-
207	Պատերի բ/որակ գաջե սվաղ	$մ^2$	61.590	3,371.65	207,659.92
208	Պատերի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	$մ^2$	61.590	2,528.74	155,745.10
209	Առաստաղի բ/որակ գաջե սվաղ	$մ^2$	24.320	3,371.65	81,998.53
210	Առաստաղի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	$մ^2$	24.320	2,528.74	61,498.96
211	Պ/գրանիտե հատակների պատրաստում /12մմ/	$մ^2$	24.320	14,329.51	348,493.68
212	պրեսգրանիտե շրիշակ H - 100 մմ 17,65գմ	$մ^2$	1.765	14,329.51	25,291.59
	11.9.Հ9 ս/հ			-	-
213	Ներքին պատերի բ/որակ ց/ավազե սվաղ	$մ^2$	65.950	3,371.65	222,360.32
214	Պատերի երեսպատում հախճասալով	$մ^2$	65.950	14,329.51	945,031.18
215	Պլաստմասե կախոցի առաստաղի պատրաստում ցինկապատ պրոֆիլներով	$մ^2$	13.880	9,272.04	128,695.92
216	Պ/գրանիտե հատակների պատրաստում /12մմ/	$մ^2$	13.880	14,329.51	198,893.60
	11.10.Հ10 Մարզական պարագաների պահեստային սենյակ			-	-
217	Պատերի բ/որակ գաջե սվաղ	$մ^2$	55.350	3,371.65	186,620.83
218	Պատերի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	$մ^2$	55.350	2,528.74	139,965.76
219	Առաստաղի բ/որակ գաջե սվաղ	$մ^2$	15.180	3,371.65	51,181.65
220	Առաստաղի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	$մ^2$	15.180	2,528.74	38,386.27
221	հետերոգեն սպորտային ՊՎՔ ծածկույթ 4.5 մմ հաստությամբ՝ 1 մմ հոմոգեն պաշտպանիչ շերտով , դասը՝ 34/43 , 1քմ քաշը՝ 3.1 կգ, 10մմ հաստությամբ շրիշակներով	$մ^2$	15.180	14,750.97	223,919.72
	11.11. Հ11 Մարզադահլիճ			-	-
222	Պատերի բ/որակ գաջե սվաղ	$մ^2$	493.460	3,371.65	1,663,774.41
223	Պատերի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	$մ^2$	493.460	2,528.74	1,247,832.04

224	հետերոգեն սպորտային ՊՎՔ ծածկույթ 4.5 մմ հաստությամբ՝ 1 մմ հոմոգեն պաշտպանիչ շերտով , դասը՝ 34/43 , 1քմ քաշը՝ 3.1 կգ, 10մմ հաստությամբ շրիշակներով	մ²	340.000	14,750.97	5,015,329.80
225	Պատուհանները քողարկող ցանց 4մմ հաստության պարանի հյուսվածքից	մ²	156.45	2,950.19	461,557.23
226	Առաստաղի քողարկող ցանց 4 մմ հաստության պարանի հյուսվածքից	մ²	340.00	2,950.19	1,003,064.60
227	Մարտկոցների մետաղական քողաարկիչների պատրաստում և տեղադրում	տն	0.359	375,096.03	134,618.44
228	ներկված Անկյունակ 30x30x3 / փոշոնորկված / մուգ մոխրագույն /	գմ	179.400	6,321.84	1,134,138.10
229	դրոբ ցանց 2.77մմ, 25X25մմ / փոշեներկված / մուգ մոխրագույն /	մ²	31.140	5,900.39	183,738.14
230	մետալոպլատե դռներ / մոխրագույն/	մ²	29.920	38,352.52	1,147,507.40
231	բռնաձողեր մետաղական նիկելապատ խողովակներից Մ 30մմ x 3մմ	գմ	2.800	11,379.32	31,862.10
232	Բաստկետբոլի գույքային վահաններ /վահան,զամբյուղ,ցանց/	կ-տ	2.000	231,800.92	463,601.84
	Ընդամենը՝ ներքին հարդարում				23,618,277.43
